

ՄՇԿԿ

Տարեկան գինը 10 րուբլ. կես տարվանը 6 րուբլ.:

Մասնակցի նամակները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միամսյան նամակագրատան մէջ:

Ատարարագրողիցի դիմում են ուղարկել:

Գլխավոր խմբագրիչը. Պ. Բալասանյան:

Նամակագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(Բացի կիրակի և տոն օրերից)

Յայտարարումին ընդունվում է ամեն լիցիտով:

Յայտարարումներին համար զեպրում են

խորանայն քանակը 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Մի նոր երկրորդ - Ներքին Տեսութիւն, Ներքին Ըրտեր - ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. «ՍՈՐՅԱԾՔՆ» Ըրագրի թղթակցութիւնը: Նամակ Թիֆլիսից: - ԷՆՈՒԿԻՐՆԵՐ - ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Գաւթի թէկ:

ՄԻ ՆՈՐ ԵՐԵՆՈՅԹ

Երէկ մենք արաստակցինք «Մշակի» մէջ Կ. Պօլսի «Մանգումէի էֆֆեր» լրագրից մի յօդուած թիւրքաց Տայիրի սահմանագրութեան քանն և մէկերորդ տարեդարձի ածելու վրայ:

Առաջին անգամ տեսնում ենք որ Կ. Պօլսի Տայրոց մամուլը սկսում է քննողական աչքով նայել այն երկայնի վրայ, որին առաջ պօլսեցի Տայր յանցանք էր համարում քննադատել:

«Մանգումէի էֆֆեր» լրագրի յօդուածը մի խիտ, անխնայ քննադատութիւն է թիւրքաց Տայիրի սահմանագրութիւնն սոված կրակական իրաւունքներին, անողորմ քննադատութիւն է Կ. Պօլսի Տայիրի թեթեւամտ բնատրութեան:

Գա թողորմին նոր և մեր կարծիքով ուրախ կրեւոյթ է, որովհետեւ ոչինչ առաջագիմութիւն հնարաւոր չէ որ և է հասարակութեան մէջ առանց անձնաքննութեան Բայց դարձեալ յօդուածը ունի մեծ պահատութիւններ. նա հիմնաւոր քննութիւն չէ, նա չէ բացատրում անմիթիմար երեւոյթի պատճառները, այլ մի քարոզ է միայն, աւելի ոչինչ:

Կ. Պօլսի Տայ մամուլը անընդունակ է

հասկանալ որ պօլսեցին այն պատճառով անտարբեր է դէպի ազգային գործերը, թեկեւմիտ է, ետական է, միմիայն իր անձնական նրախական շահերի վրայ մտածող է, որ նա Հայաստանից կարգած է, նա ոչինչ կապ չունի մայրիկի հօղի հետ, նա բիւզանդացի է, նա պատկանում է մի բուրժուազական հասարակութեանը, որ Բոսֆօրի ափերում նստած՝ իր հարստանալու, կամ իր օրական հացի վրայ է մտածում... Նրա առօրեայ կենսական պահանջները համարաչա չեն հայաստանցի Տայր առօրեայ պահանջներին հետ, որոնց հետ նա ծանօթ էլ չէ: Նրա լինելը գործն է, օրինակ, իր ծախսով պահել իր հիւանդանոցի մէջ Հայաստանից գաղթած մշակներին որը մանուկներին... Մի ուրիշ ազգութեան պատկանող պօլսեցու ինտերեսները աւելի մօտ են պօլսեցի Տայրին, քան թէ Հայաստանցի Տայր շահերը:

Գարտններով փոխել այս կամ այն հասարակական երեւոյթ անհնարին է:

Երկուսից մին՝ կամ պէտք է զրգուել Կ.

Պօլսի Տայիրի շահախիղճական զգացմունքը ազգային գործերի վերաբերութեամբ, կամ պէտք է կատարելապէս անտես առնել Կ.

Պօլսի, Տայիրիքի վրայ հոգալու ժամանակի Բայց այնու ամենայնիւ «Մանգումէի էֆֆեր» լրագրի յօդուածը մի նոր երեւոյթ է, առաջին քայլ է դէպի արդիւնաւոր ազգային անձնաքննութիւնը:

Մինչև այժմ Կ. Պօլսի մամուլը իր պօլսեցիների բոլոր պահատութիւնները արժանաւորութեան տեղ էր ընդունում, չէր նախատում ոչ նրանց շահախիղճութիւնը, ոչ նրանց անշարժութիւնը, ոչ նրանց յանցանք

ւոր անտարբերութիւնը: Նա ամեն բան լաւ էր գտնում: Կ. Պօլսի և Տայրոց մամուլը կարծում էին որ մեծ գործ էին կատարում, մեծ ծառայութիւն էին անում ազգին և Տայիրիքին, կրք միտին հաւաքվելով կուշտ ուտելուց և լաւ խմելուց յետոյ, մի քանի հարկւր անգամ կը կանչէին, «կը ցցէ ազգ, կեցցէ սահմանագրութիւն» և յետոյ կը ցրվէին իրանց տները, զոհ իրանց արած յիմարութիւնից:

Գոնէ այժմ թէ է կարողի ձեռքով, լսվում են մամուլի մէջ ազնիւ ձայներ, որոնք սկսեւ են խտաութեամբ բնութագրել, ամօթի զրօշմով դատապարտել այն ցնորական, խաբերայական և այլանդակ երեւոյթը, որ անուանվում է Թիբլիսայի հայոց սահմանագրութիւն:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Մտկութեամբ հրատարակելով «Փարոս Հայաստանի» պատկերաբար Հանդիսի երրորդ տեսակը (մայիս-յունիս) ստացված է Թիֆլիսում:

Անցեալ կիրակի օրը կէտօրին պ. Սարգսիանցը Թիֆլիսի հայոց մշտական խմբի մասնակցութեամբ առեց մանկական ներկայացում: Ներկայացրին լեզրով մազեր վերջիլի, Կժբաղ-գարաթ թատերոյ լինելու մասնակցութեամբ: Ա. Ա. լրող ենք համարում անգամ նկատել թէ՛ որքան անսպասելի է այդ տեսակ անբարոյական պիւնտերի ներկայացման տանել 10—15 տարեկան երեխաներին: Գոտով ենք, որ գաւառացիք չեն հետեւ Թիֆլիսի այդ օրինակին:

Խմբագրութեան մէջ ստացած պ. Ա. Բիշմի-չեանցի «Բոստարանութեան համառօտ կրկնագրական դասընթաց» գրքուկը, իլլինի առևանդին

գրքուկի թարգմանութիւնն է: Պ. թարգմանողը խնդրում է այն անձանց, որոնք ձեռքի տակ աւելի լաւ և յաջող նայերեն տեքստներ ունեն, հազարել իրան, որով իրան միջոց կը արվի ուղղիկ այդ տեքստները ընդարձակ Բոստարանութեան գոտագրութեամբ, որի ազգագրութիւնը յանձն է առել Թիֆլիսի ազգագրական ընկերութիւնը: Այս կէտի վրայ գործում ենք մեր մասնագետները ուղարկութիւնը:

Ա. Ա. ԲԻՏԱՆԻՐԱՊՈՒԹԻՅ մեզ գրում են: «Քանի որ առաջ վերադարձան այստեղ էջմիածնից այն երեք պատգամաւորները, որոնք քաղաքի կողմից ընտրված և ուղարկված էին էջմիածնի և Երևանի Ա) Կրթութեամբ և արդիւնքը հոնազարդ պարտիկ վերադարձնելու: Բ) Ինչպիսի պարտիկ բացման մասին դարձեալ յիշեցնելու և խնդրելու: Գ) 5100 րուբլի գնորատրական կարողութեամբ համար որչա՜հ արդիւնք քաղաքը ազատ կացուցանելու համար: Կրթութեամբ և արդիւնքը քաղաքի ցանկութեան համար ձայն հող. իշխանութիւնը արդէն ստորինը է յօդուած յիշեալ ուսումնարանին: Իսկ մնացեալ երկու կէտը հարցերի վերաբերութեամբ դեռ չէ կարելի մի դրական բան առել, ըստ որում պ. պ. պատգամաւորները իրանց գործողութեանց մասին դեռ ևս չեն տեսել հայր կամ բացատրութիւն թարգմանական ժողովի մէջ, որը կայանալու է ամսոյս 7-ին»:

Այս տարի մայիս ամսում եկած է Ալեքսանդր-գրաւոր «Տաւրի» ցրկը և բաւական լաւ խաղեր է տալիս: Զուարճութիւններից զուրկ ժողովուրդը յամարում է այնտեղ հաճութեամբ: Վերջին յունիսի 3-ին նշանակված խաղը տեղոյս Արմատեանցիան օրորողը զարցիլի օգտին էր:

Մեզ հարցում են Ա. ՊԵՏՐՈՒՍՈՒՄ, որ մի հարուստ ազգաւոր պարուն շուտով հիմնելու է մի ընկերութիւն Հայաստան անունով, որի նպատակը պէտք է լինի նպաստել Հայաստանի ֆիզիկական, ժողովրդական և քաղաքական կարգութեան ուսումնասիրութեանը: Նա կը սայ միջոց այն պարտիկներին, որոնք կը կամենան Հայաստան ճանապարհորդել զիտական ուսումնասիրութեան համար: Նշանակ է կը վարձատր այն բոլոր այնպիսիները, որոնք Հայաստանին առնի աշխարհում և իր բնական ևն զարարելուն հարկուկ հարցում են որ մի բաւականին մեծ գումար է նշանակված Հայաստանի ամենամեծ ղեկավար քաղաքի պատրաստելու համար և այդ նպատակով դիմած են կիպէրան:

ԴԱՍԻԹ ԲԵԿ

Պ Ա Ս Մ Ա Կ Ա Ն Վ Է Պ (1722—1728)

Ժ. Կ.

Ջելով բերդի մէջ, հայոց թաղի մի անկիւնում, ուղիղ ամրոցի պարպի մօտ կանգնած էր մի քարաշէն ստուն: Այնտեղ իր միակ փոքրիկ որդու հետ ընակվում էր մի այրի կին: Նրա ամուսին այրը ունէր սեպհական այրի, որի թիֆլիսի պատգամներից արագ էր քաշում, իսկ խաղչից գինի էր պատրաստում: Նա զինվածաւոր էր և նրա տունը ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ գինեատուն: Ամուսնի մեռնելուց յետոյ նրա առևտուրը շարունակեց կինը: Նա յայտնի էր ամբողջ բերդի մէջ որպէս լաւ արագ քաջոց և նրա պատրաստած գինիները ամենաընտիրն էին իրանց տեսակի մէջ:

Այդ կինը կուլում էր Սառա. նրա տարիքը անցել էին եռեսունից, բայց տակաւին թարմ էր մնացել և պահպանել էր իր երիտասարդութեան գեղեցիկութիւնը: Սառան այն վարպետ կնիկներից մէկն էր, որ անդադար ընկնելուց և կանգնելուց յետոյ, նոր ճանաչում են կանայքը, որ գիտեն, թէ այժմ ինչպէս պէտք է վարվել մարդկաներին հետ: Նա իր յաճախորդների մէջ լաւ ընտրութիւն անել գիտէր. երբէք թող չէր տալիս, որ իր չը հաւանած գինի կամ արագ զընդները իր տանը նստելին կամ այնտեղ խմին, այլ պարտաւոր էին առնել և դուրս տանել: Գրա համար բակի մեծ դրան մէջ բացված էր

մի դռնակ, որտեղից նա յաճախորդների փողք և դարակ ամենները ընդունում էր, և արագով կամ զինով լցնելով, ճանապարհ էր գնում:

Երկրի սովորութիւնը արդարացնում էր Սառայի վարժուճքը. Սառան կին էր, բաւական գեղեցիկ կին: Նրա տղամարդը մեծած էր և իր տանը օտար մարդիկ ընդունելը անպատշաճ էր նրա համար: Իսկ այդ զինը, ընդհակառակն, նրա տան ստորերկրայ մասանում, ուր գրած էին զինու կարանները, ճրագ էր վաւովում: Հինգ հողի նստած էին այնտեղ խում էին: Նրանց առջև գրած էր հաց և տաք խորովածը ինքը Սառան շամփուրներով ներս էր բերում և բաժանում էր ընթրիչներին: Արդեօք նրա ճառանները տանը չէին, թէ տանտիրուհին ցանկանում էր, որ իր հիւրերին ոչ ոք չը տեսնէ, և այդ պատճառով ինքն էր յանձն առել ծառայութիւնը. — յայտնի չէ: Միայն նա մի առանձին յարգանքով էր վերաբերվում դէպի իր հիւրերը, որոնց թէ գէմերը և թէ հագուստը բաւական կատարաւոր արտապատութիւն ունէին:

— Կես գինիից անցաւ, ասաց հիւրերից մէկը.

— դեռ ոչինչ ձայն չը կայ:

— Եթէ մի ձայն լինէր, իմ շունը առաջինը կը լինէր, որ խաբարը մեզ կը տար, պատասխանեց տանտիրուհին: — Կուք ձեր բէճիկն կացէք, ես իսկոյն կը բաց անեմ, երբ դուան թիկնոցը կը լսեմ: Նա դուրս գնաց: Երևում էր, այդ մարդիկը անհամբերութեամբ սպասում էին ուրիշներին, որոնց ուշանալը նրանց անհանգստութիւն էր պատճառում: Մէկը ասաց.

— Չի լինի թէ մի վտանգի դատանած լինեն:

— Նրանց եթէ ջրագաջի տակն էլ զցես, ողջ կը դուրս գան, պատասխանեց միւսը:

— Ապա ինչու այդքան ուշացան:

— Ա՞յ ի քանո՞ւմ, կարելի է մի արգիւք պատահած լինի:

Նրանք սկսեցին դարձեալ խմել, հանգստանալով այն մտքով, թէ իրանց սպասած մարդիկը եթէ ջրագաջի տակն էլ ընկնելու լինեն, ողջ կը դուրս գան:

Իսկ Սառան դուրս գալով մտանոց, որտեղ նստած էին հիւրերը, քարեայ սանդուղքներով բարձրացաւ և մտաւ մի սենեակ, որ կացուցանում էր նրա քնարանը: Այստեղ պոռկած էր նրա միակ դաւակը՝ փոքրիկ Պետրոսը: Բարակ վերմակը ծածկում էր նրա երեսը, մայրը յետ քաշեց, որ չնշառութիւնը ազատ լինի: Անեակի տաքութիւնից նա քրտնել էր, և կաթիլները մանրիկից հոգի նման պատել էին նրա շուշանի գոյն ճակատը և շառագունած, վարդաօյն թշուր: Մայրը խնայեցին, համբուրեց նրան, այնքան զգուշութեամբ, որ երեխան ոչինչ չը զգաց: Գետոյ նստեց անկողնի մօտ և խորին տխրութեամբ նայում էր նրա երեսին: Շուտով խեղճ կնոջ աչքերը լցվեցան արտասուքով: Ըսուկեց խուլ կիրակով լաց լինել: Այդ կինը, որ հազարատնորներին տէր էր զամեն և ոչ մէկին չէր սիրել. — սիրում էր իր դաւակին, այն վերմ և բընական սիրով, որ տուած է մայրերին միայն: Բայց ինչու էր լաց լինում նա:

Բերդի մէջ բնակվում էին յիսունի քաթ հայ ընտանիքներ, երբ լուր տարածվեցաւ, թէ Գալիթ բէկի զօրքերը պիտի պաշարեն բերդը, հայեր կամեցան դուրս գալ այնտեղից: Այլամագուլի խանը, բերդի տէրը, արգիւք, ասելով, «Չեղ պէտք է պահել իմ ձեռքի մէջ, եթէ ձեր հատուակիցները կը պաշարեն իմ բերդը, այն ժամանակ ձեր զուրկները ուսմաների փոխարեն թողանալների մէջ կը գնեն և կը նստեն դէպի

թշուտու բանակը»: Պարսիկը պահել էր նրանց օրպես պատանդ, եթէ թշուտին նեղէր, պէտք է նրանց վրայ թափէր իր վրէժնորութեան թուղը: Այդ պատճառով բոլորը մեծ երկարուով ըսպատում էին իրանց տարտեղի վախճանին: Այդ բոլորից յետոյ շատ հատկանելի էր, թէ ինչու էր լաց լինում Սառան: Գուցէ իր գաւակն ևս այն բազմաթիւ երեխաներից մէկը կը լինէր, որ պիտի մարթվին բերդի փողոցների մէջ:

Նրան իր հոգեկան տխրութիւնից դուրս բերեց դուան ձայնը, որ հազու լսելի կերպով բաղնեցին: Նա վազեց դէպի դուռը և իսկոյն բաց արեց: Ներս մտան շուր հողի: Սառան նրանց տարաւ մտանը, ուր նստած էին առաջին հիւրերը: Նորեկներից մէկը կուզ սափրիչն էր իր կրկնակի սապատներով, միւսը նրա գեղեցիկագէտ աշակերտն էր, երրորդը հակապատիկ հիւան էր, իսկ չորրորդը՝ այն անմասթ տղամարդը, որ բերդի գրում միացաւ նրանց հետ և իրան խանի ֆէրաշ էր կոչում:

Առաջինները, տեսնելով նորեկներին, սկսում չփոթվեցան, խառվութեան մէջ ընկան: Բայց երբ սափրիչը մտնեալով ասաց. — «Ողջոյն ձեզ», բոլորը ուրախութեամբ չըջապատեցին և սկսեցին համարել նրա աջը, բացականչելով.

— Ատուռած է վկայ, տէր հայր, զօխաբի սատանան էլ չէր կարող ճանաչել ձեզ, եթէ զուք ինքներդ ձեզ չը մասնէիք:

Սափրիչը հակաձորքի տէր-Ալեսուրն էր, Գալիթ-բէկի ամենաքաջ զօրագետներից մէկը:

— Նստեցէք, տէր հայր, ասեցին նրան. — Խորովածը դեռ չէ սառել, ձեր բաժինը պահել ենք:

— Օրհնեալ լինիք, որդիք, պատասխանեց քահանան. — կը նստեմ, ի հարկէ, կը նստեմ թող առաջ այդ բաները վրայիցս արձակեմ, յետոյ կը